

կեանք վայելելով՝ մոռացեր են Հայոց կրօն անցեալ նեղութիւնքն . . . արդեօք ինչով պէտք է զնւարձանայ Պարսկահայն, իւր յաջողակ գործերովն, երեւել վաճառքովն, իւր նախնի սրբատեղիներովն, հոյակապ եկեղեցիներովն, քաղցրաձայն եկեղեցականների դասերովն, սրբատեղեաց տօնահանդէսներովն, հաստատուած մշտականներովն, ընթերցարաններովն, ընթերցասէր ընկերներովն, թէ ուղղակի եկած լըրագիրներովն, արդեօք ո՞ր միւսն ասեմ:

Ինչով պէտք է յայտնի լինի մեր տօն օրերն՝ որ միայն անշուք մի եկեղեցւոյ մէջ կկատարուի ի՞նչով պէտք է բորբոքի մեր ազգային եռանդը ինչով պէտք է լինի մեր յառաջագիմումներն, մեր ազգային պէտք է Պարսկաստանի Հայոցմէ շատ քոչ լինին որ այսպէս մի վիճակի մէջ, այսքան նեղութիւն կրեցին և իրենանց կրօնքն չուրանալով՝ ճակատներն բաց անամօթալի այսօր կան: Ի հտրկէ կիմանաք: Պարսկաստան շատ ուրիշ ազգեր եղիւր են՝ որ այժմ չկան, բոլորն էլ հաւատքէ դարձեր են, կերկարի եթէ մա՛րտասնեաբար գրեմ, թողու՛ք ի դէպ ժամանակի. կան այժմ Պարսկաստան շատ գիւղեր՝ որոց բնակիչքն կպատմեն թէ առաջ ուրիշ ազգ են եղեր՝ գիւղովին դարձեր Պարսիկ եղեր են, ինչպէս Սուլթանապատ նահանգի Ահմէտապատ գիւղն, որ բոլորն Արացի են, ի Մահմետականութիւն դարձած են, մինչև ցայժմ ևս իրարու հետ Արացիքն կխօսին, իւրեանց ազգային և կրօնական հին ծեսերն պահած ունին, նմանապէս Խորասանի մօտ Արասապատ գիւղն, քոչուներն Աստուծոյ սր Հայոցմէ մինչ ցարդ այսպէս բան չէ եղած, թէ և անպէտք դուրսի նկատմամբ Պարսկաստան շատ Հայ եղած են, գորովք կրկրիս երբեմն ունեցած անկարգ դրութիւնն ցրուեր է և անյարմար օդ և հողի մէջ չաճելով՝ օրէ ցօր այս սրտաճառաւ սրակներ են: Նոցա բարօրութեանը կմտղթէ:

Պ. Նամակագրի ներկայ գրութեամբ յղած բանաստեղծութիւնը ստացած եմք եւ Արարատայ նախընթաց թերթից միոյն մէջ տպուած է: Իսկ յառաջագոյն յղածը ցարդ Խմբագրութեան հասած չէ:

Արարատը շարունակ եւ ամեն ամիս իւր կանոնաւոր ընթացքովն՝ Ռուսական արքուն. սուրհանդակութեան միջոցով կխրկուի ինչպէս ուրիշ տեղեր՝ նոյնպէս ի Պարսկաստան (Ի Թէհրան, յԱսպահան, ի Դավրէժ), եւ երբ ծախքը լիովին վճարուած է՝ անյայտ է պատճառը թէ ինչո՞ւ համար Արարատները կը կորչին կամ կուշանան:

Իսկ գալով Թէհրանի Հայոց եւ եկեղեցւոյ անշուք գրութեան եւլն, այս խնդիրը աւելի յինքեանց կախուժն ունի եւ ինքեանց կվայելէ արժանը հոգալ:

Շնորհակալութեամբ կհրատարակեմք հետագայ նամակը:

ԵՐԵՒԱՆՈՒ ՀԱՅՈՑ

ՕՐԻՈՒԴԷՑ ԾԻԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԱՇԷԻ.

ԽՏԷԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՐԱՐԱՏ ԱՆԱԳՐՈՅ.

Հոգաբարձութիւնս Երեւանայ Ս. Գալանեան օրիորդաց Հայոց Ծխ. Դպրոցի անցեալ 1876 ամի դպրոցական հաշիւը անսկիւրց յետոյ ներկայութեամբ պատուաւոր անձանց քաղաքիս՝ պարտաւորեցաւ իւր ամենայն սրտէ շնորհակալութիւնը յայտնելու պատճառաւ մեծապատիւ նուիրատու անձանց՝ խնդրել Արարատ պատուական ամ:

Մ. ԲՃԿՆԱՆՑ.

1877 Փետրւոր 3.

Է. ԽԻՆԴՐԱՆ.

սաղրի Խմաղորութիւնիցդ տպագրութեամբ հրատարակել զայն ի գիտութիւն սիրելի մերս Ազգայնոց՝ համաձայն հետեւեալ ցուցակին:

Երևանայ Ս. Վայեանեան Հայոց օրիորդաց Դպրոցը իւր վարչութեան աշխատութեամբ 1876 ամի ընթացքում՝ ունեցած է 1219 ուսուցիչ և 70 կուս. մասը Դպրոցի որից ի բաց հանելով 483 ուսուցիչ թոշակադրամները աշակերտահաց՝ 736 ուսուցիչ և 70 կուսէկէն տարեկան և միանուագ *) տարբեր զորս նուիրել են հետեւեալ բարեմիտ անձինքներին. Գրիգոր Գրիգորի, Մելիք Աղամալեանց Տիկին Տիրուհին 25 ուսուցիչ. Գեղամեանց Տ. Սոփիայն երկու տարուայ 30 ա. Եղիազարեանց Տ. Հաշմէկէն 20 ա. Երզնէկեանց Տ. Օլգայն 10 ա. Ղարաբեկեանց Տ. Անաստասէն 10 ա. Բժիշկ պարոն Գ. Տէր Գրիգորեանցն 20 ա. Բժիշկ պարոն Դանիէլէկեանցն 10 ա. Գեհարխանեանց Տ. Սոփիայն 10 ա. Դեհարխանեայ Տ. Եկատարինէն 10 ա. Վարչամեանց Տ. Մարիամ 15 ա. Ասաբեկեան Տ. Ասիկեանը 10 ա. Լուսինիչ Տ. Մարիամ 10 ա. Եղիազարեանց Տ. Ասմարն 20 ա. Ափրիկեանց Տ. Մարիամն 20 ա. Յովակիմեան Տ. Բաղդասարէն 10 ա. Եղիազարեանց Տ. Աշխէնը 15 ա. Նասարեկեանց Տ. Գիլղիզարն 20 ա. Հասխովանեան Աննան և Եղիսարէթն 20 ա. Ղարաբեկեանց Տ. Սոնայն 10 ա. Մնացականեան Տ. Եղիսարէթն 15 ա. Խոզարաղեանց Տ. Վասիլեան 10 ա. Ստեփանեան Տ. Սոնայն 15 ա. Եղիսարեանց Տ. Եղիսարէթն 10 ա. Գեորգեան Տ. Սոփիայն 20 ա. Բղունեանց Տ. Զեմեանը 10 ա. Տ. Յովսէփեան Տ. Եղիսարէթն 10 ա. միւս Տէր Յովսէփեան Եղիսարէթն 10 ա. Վանեցեանց Տ. Բաբինը 10 ա. Մելիք Վարդանեանց Տ. Նինայն 10 ա. Մոսիսեան Տ. Ուսանայն 10 ա. Մելիքեան Տ. Մարգարիտն 10 ա. Ափրիկեան Տ. Մեհհրին 10 ա. Պողոսեան Տ. Գիւլումն 10 ա. Խաչատրեան Տ. Եղիսարէթն 10 ա. Մուսարէփեան պարոն Ստեփանը 10 ա. Մէլիք Գրիգորի, Սմբատ

եան Ս. Մարութ Եղիսարեան 10 ա. Տփիսեցի Ծովանեանց պարոն Տիգրանը 100 ա. Տէր Յովսէփեան պարոն Յակովբն 12 ա. Տէր Աստուածատրեան պարոն Զահրապն 10 ա. Թաղիանեան պարոն Սողովմն 15 ա. Դըրմիկեանց պարոն Բաղտասարն 5 ա. Մուսիսեանց պարոն Թագեան 3 ա. Թատրախաղից 18 ա. Ուրտէ-
 քէն Կարէն Կարէն. Մելիք Աղամալեան Տիկին Գե-
 թեանն նուիրել է և նուիրումէ տարեկան 21 ա. մի օրգեղի թոշակ. Մելիք Աղամալեան Տ. Տիրու-
 հին բաց ի 25 ա. Նուէր. նուիրած է և մի օրգե-
 ղի թոշակ 12 ա. Թայիրեան Տ. Աննայն մի օր-
 գեղի թոշակ 12 ա. Այվազեան Արարիկեան
 Վարդապետ մի օրգեղի 12 ա. Տէր Ամբակում-
 եան պարոն Հայկը մի օրգեղի 12 ա. (Հաշմով
 տարուայ Յունիսից սկսած՝ 7 ա.) իսկ 26 ա. 70
 կուսէկը աշխատութեամբ պարոն Գանձապահի
 շարքովեան ու ամսական տոկոսիքն են նուիրած
 դրամներին որոց գումարն է 736 ա. 70 կուսէկ. *)
 Այս 1219 ա. 70 կուսէկ ամբողջ գումարից տուած
 է 1875 ամի պարտ մնացած 184 ա. ծախքը զըպ-
 րոցի և 882 ա. և 47 կուսէկը գործադրուած է
 1876 ամի հետեւեալ դպրոցական ծախսոց համար.
 տարեկան վարձ ուսուցչաց 623 ուսուցիչ և 50 կու-
 սէկ. Դպրատան վարձ 156 ուսուցիչ. ծախսին
 Դպրոցի 17 ուսուցիչ, վառելաքաղցի 21 ուսուցիչ
 և 11 կուսէկ զանազան մանր ծախսոց 14 ուսուցիչ
 և 8 կուսէկ. Իսկ 153 ուսուցիչ և 23 կուսէկը
 Դպրոցը զրեց իւր ունեցած 880 ուսուցիչ անշարժ
 գումարի վերայ և բաց ի ստացածներէնը՝ տակա-
 լին սպասիկ են մնում 130 ուսուցիչ նուէրը ո-
 րոց մասին յուսով է Դպրոցը լէ այնք ևս շուտ
 կհասուցանեն ստորագրող Տիկիններու Այս վերո-
 գրեալ դրամաւոր մուտքից աւելի՝ Տեղի ասա-
 ջարկութեամբ անցած 1876 ամին նուիրել է Ա-
 զիզեան պարոն Աղաջանը աղքատ աշակերտու-
 հաց և դպրոցի գործադրութեան համար 2 օղ-
 մայ լուղի և մէկ արկղ երկաթեայ դրոշմ իսկ
 ներկայ ամիս նոյն չափով նուիրել է Բակալեան

(*) Կշարունակութեամբ մնանք գրա-
 տար ընդհանուր ստորագրութեանը Դպրոցին մի գու-
 մար պատրաստելու համար:

(*) Այս գումարի 45 աւեր. մնացած տպագրիկ նը-
 լէքներէն մնաւ Դպրոցը հաշուաւորութեանց յետոյ:

պարոն Գեորգի, և Տէրունեան պարոն Թադէոսն մի օգնայ փոստի թուղթ, զորս տպագրել տուեց Դպրոցը՝ նուէրները խնդրելու համար, որոց հետ և մի արկղ ծրարներ. յիշելու ու շնորհակալութեան արժանի է և Դպրոցի գանձապահ մեծապատիւ Գեորգեան Պարոն Զաքարի մեծալուծիւնը, որ Դպրոցին վերաբերած տպագրելիքը՝ բոլորը ձրի է տպագրել տալի իւր տպագրատանը:

Այս ամենի մասին կրկնումէ Հոգաբարձութիւնը իւր խնդիրն՝ փութով հրատարակել ի ցոյց հասարակաց, թէ Երևանայ Հայ Ժողովուրդն ևս իրօք ճանաչեց և սկիզբն արաւ իւր Ազգութեան սուրբ պարտքը՝ սիրով կատարել իւր հարազատ որդւոց կրթութեան համար:

Անդամք Հոգաբարձութեան Սոփիա Մատթեանց
Սոփիա Գեղամեանց
Աշխէն Եղիազարեանց
Աննա Թայիրեանց.

Տեսուչ Դպրոցի Յովսէփ քհնյ. Մեղեանց

Համար 4.

Յ. Ե. Մ. Բ. 1877 թ.

յԼԵԼԱՆ.

ԴՊՐՈՑ ՀԱՅՈՑ ԳԵՕՋԵԼ — ՏԵՐԵԻ.

ԽճԻՆԻՆԻՆԻ ԱՐԱՐԱՐ ԽճԻՆԻՆԻ.

Արդարեւ ամեն քարացած սիրտ զգումէ և հասկանումէ այն առատագիւ շնորհք և բազմապատիկ հրախախքը՝ զորս հեռատես և բազմախոնջ կառավարութիւնն գերիմաստ Հօրն Հայաստանի՝ Ա. հափառ Հայրապետի ամենայն Հայոց Տեառն և Տեառն Գեորգայ Դ. ի անխնայաբար տարածել է և տարածումէ իւր որդւոց վերայ մանաւանդ իսկ՝ այն իմաստազուրկ՝ տարաբնակ և անուսումնասէր Ժողովրդոց վերայ, որպիսիքն մեր Նոր Բայազիդու մի մասնի գիւղօրայքն են, որոնք բաց ի եկեղեցւոյ միջի կարդալուց և աղօթքի ձայնից՝ ամե-

նեին կարդալու ձայն լսած չէին մինչև ցայժմ, բոլորովին զուրկ ուսումից և մանաւանդ առեցող ուսման. Բայց այժմոյս՝ երբ Բաղմբարևտ Հօրաշխատութեան պտուղը, շնորհաց լոյսը տարածվեցաւ Հայաստանի վերայ, փոքր մի կայծ արծարծվումէ և մեր հայրենակցաց մէջ, Ինչպէս անցեալ օրերը, երբ բարեկարգական գործով շրջումէի գիւղօրէքն եկեղեցեաց տարեկան հաշիւները տեսնելու, քանի մի գիւղերում պատրաստի դպրոցներ տեսի, որոց մէջ նշանաւոր է Գեօղադարայ գիւղի դպրոցը, ուր հաւաքուած էին 50-ի չափ աշակերտներ, և մեծ ջանքով յառաջ էին տանում իւրեանց ընթերցանութիւնը Հայոց և Ռուսաց լեզուի. Սոցանից մի քանի յառաջդէմները ուսանումէին Հայոց լեզուի Գերականութիւնը, Քրիստոնէական վարդապետութիւնը և սրբազան ու հայոց պատմութիւնը մեծ սիրով:

Ուսումնարանի սկզբնաւորութիւնը և կառավարութիւնը տեղւոյն բնակիչ ուսումնասէր Պարոն Մկրտիչ Տէր Պետրոսեանցի վրայ է, որը՝ ինչպէս ես նկատումեմ՝ օրըստ օրէ յառաջ կ'տանի ուսումը և ուսումնարանի գրութիւնը. Յուսով եմ՝ որ Աստուծով այսպիսի ուսումնասէրներ անպակաս ինչին ազգից:

Աւերոյիշեալ Գեօղադարայ գիւղի մէջ այսպիսի մի ծխական դպրոց ամենահարկաւոր է, որովհետեւ սա՝ մի կեդրոնական մեծ գիւղ է բաղկացած 200 և աւելի տներից, ունի բազմաթիւ ուսումնատենչ մանկտիք: Այս գիւղի շրջապատն Հայոց գիւղօրայք են առհասարակ՝ և մերձաւոր. սրանց եկեղեցին՝ թէև անշուք, բայց ունի տոկոսեօք տուած երեք հազար մանէթից աւելի փող եթէ վերոյիշեալ Պ. Մ. Տէր Պետրոսեանցն ունենայ միջոց և յաջողութիւն կարօղ է թոյլտուութեամբ և վերահասութեամբ Եկեղ. վարչութեան այն եկեղեցւոյ փողի գործածութեամբ և գիւղականաց օգնութեամբ՝ ունենալ մի օրինաւոր եկեղեցի և մի ծխական դպրոց՝ առընթեր եկեղեցւոյն յիշեալ գիւղի մէջ, որոյ մէջ կ'ուսանին բազմաթիւ մանկուկք և մերձաւոր գիւղերից: Փոքր ինչ ուսման ճաշակը առնելուց զկ'ի՛ն՝ հնար կ'լինի և միւս գիւղերը մննել զպրոցներ, որով և կըգայ ժամանակ, երբ կ'փայտալի մթութեան մը-